«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի _____ N__-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության սահմանով արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման բացատրական նշումները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2170-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Որոշման նախաբանում «74-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «24-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով.
- Որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետում «78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ, 82-րդ, 83-րդ և 84-րդ հոդվածների» բառերը փոխարինել «5-րդ գլխի» բառերով.
- Հավելվածի ամբողջ տեքստում «78-րդ», «79-րդ», «80-րդ», «81-րդ», «82-րդ», «83-րդ» և «84-րդ» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «27-րդ», «28-րդ», «29-րդ», «30-րդ», «31-րդ», «32-րդ» և «33-րդ» բառերով.
- Հավելվածի 3-րդ կետում «85-րդ» բառը փոխարինել «34-րդ» բառով.
- Հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Արտահանվող ապրանքների մաքսային արժեքն այդ ապրանքների գործարքի արժեքն է, այսինքն՝ այն գինը, որը փաստացի վճարվել է կամ

ենթակա է վճարման այդ ապրանքներն արտահանելու նպատակով վաճառելիս՝ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների պահպանման դեպքում։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ